ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

ԱՅՍ ՏԱՐԻ ԷԼ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ ավանդական հանդիսությամբ անցան ամանորի և Ս. Մննդյան օրերը։

Հունվարի 1-ին, նոր տարվա առթիվ, Մայր Տաճարում հանդիսավոր սուրբ պատարագ մատուցեց և քարոզեց գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը։

Հավարտ սուրբ պատարագի հանդիսավորապես կատարվեց Հայրապետական մաղթանք։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

Սուրբ պատարագից հետո, Վեհարանի դահլիճում, Վեհափառ Հայրապետը ընդունեց Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամների, Մայր Աթոռի ամբողջ միաբանության, վանքի պաշտոնեության և Հոգևոր Ճեմարանի դասախոսական կազմի և ուսանողության սրտագին շնորհավորանքները։

Ներկաների անունից գերաշնորհ Տ. Սահակ արքեպիսկոպոս Տեր-Հովհաննիսյանը շնորհավորեց Վեհափառ Հայրապետի նոր տարին։ Նոր տարվա առթիվ եղած շնորհավորությանց և բարեմաղթությանց պատասխանեց Վեհափառ Հայրապետը, օրհնեց բոլորին, մաղթեց խաղաղություն աշխարհին, բարգավաճում Մայր Հայրենիքին, պայծառություն Հայ Եկեղեցուն և երջանկություն ու ստեղծագործ աշխատանք հայ ժողովրդին։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 2-ԻՆ, ՇՈՐԵՔՇԱԲԹԻ, ժամը 2-ին, Վեհափառ Հայրապետի հրավերով, Վեհարանում կազմակերպվել էր ընդունելություն ի պատիվ Գերագույն Հոգևոր Խորհրդի, Վերատեսուչ հանձնաժողովի և Մայր Աթոռի պաշտոնեության ամբողջ կազմին։

Ընդունելությունը անցավ ջերմ ու սրտագին մթնոլորտի մեջ։ Եղան սրտառուչ բարեմաղթություններ Վեհափառ Հայրապետի թանկագին կենաց արևշատության, Մայր Աթոռի անսասանության և Հայրենիքի բարգավաճման համար։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 5-ԻՆ, «ՃՐԱԳԱԼՈՅՑ ՄՆՆԴԵԱՆ»-ի Օրվա տոնակատարությունները Մայր Տաճարում տեղի ունեցան հանդիսավոր իրադրության մեջ հավատացյալների հոծ բազմության ներկայությամբ։

Ճրագալույցի երեկոյան մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 6-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «ՏՕՆ ՄՆՆԴԵԱՆ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ՏԵԱՐՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ»։ Ս. Մննդյան հանդիսավոր պատարագը մատուցեց Վեհափառ Հայրապետը և քարոզեց։ Հավարտ սուրբ պատարագի «Խորհուրդ մեծ» շարականի երգակցությամբ միաբանությունը բարձրացավ Վեհարանի Ծաղկյա դահլիճը՝ շնորհավորելու Վեհափառ Հայրապետի Քրիստոսի Ս. Մննդյան հրաշափառ տոնը։ Ապա Ծաղկյա դահլիճում, Հայրապետական Իր դահի վրա բազմած, Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետը ընդունեց Ճեմարանի դասախոսական կազմի, ուսանողության, վանքի պաշտոնեության, Մայր Աթոռի երգչախմբի և ժողովրդի շնորհավորանքները։ Վերջում Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին, շնորհավորելով Քրիստոսի Ս. Մննդյան տոնը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 7-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, «ՅԻՇԱՏԱԿ ՄԵՌԵԼՈՅ»։ Մայր Տաճարում պատարագեց հոգեշնորհ Տ. Մաշտոց արեղա Թաջիրյանը։ Հավարտ սուրբ պատարագի կատարվեց հանդիսավոր հոգեհանգիստ «վաղհամօրէն ննջեցելոց»։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 7-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, Հոգևոր Ճեմարանի վերատեսչության, դասախոսա-

կան կազմի, Մայր Աթոռի շինարարական և վերանորոգչական գործերի հանձնախմբի և «Էջմիածին» ամսագրի խմբագրական կազմին ի պատիվ կազմակերպվել էր ընդունելություն Վեհափառ Հայրապետի մոտ, Ս. Ծննդի կապակցությամբ։ Ընդունելության ներկա էին գերաշնորհ Տ. Դերենիկ սրբազանը իր քրոջ հետ, պրոֆ.-դոկտ. Կարո Ղաֆադարյանը, ճարտարապետ Ռ. Իսրայելյանը և ճարտարապետ Մ. Մազմանյանը։

Ընդունելության ժամանակ առաջինը խոսք առավ Վեհափառ Հայրապետը և, ծանրանալով Հոգևոր Ճեմարանի կատարած և կատարելիք գործերի վրա, իր գոհունակությունը հայտնեց Ճեմարանի աշխատանքների համար։

Ապա տեսչության անունից խոսք առնելով հոգեշնորհ Տ. Մեսրոպ վարդապետ Անթարյանը, ծանրացավ Վեհափառ Հայրապետի եկեղեցաշեն և հայրենանվեր գործունեության վրա և ընդգծեց Վեհափառ Հայրապետի հայրական մասնավոր հոգատարությունը հանդեպ Հոգևոր Ճեմարանի։

Ճեմարանի դասախոսական կազմի անունից խոսեց պ. Արթուն Հատիտյանը, շնորհակալություն հայտնեց Վեհափառ Հայրապետի այն սրտագին հոգատարության համար, որով շրջապատված է Ճեմարանի ուսանողությունը և խոստացավ հանուն դասախոսների՝ արդարացնել այն բարձր վստահությունը, որը տածում է Վեհափառ Հայրապետը Ճեմարանի ուսուցչական կազմի նկատմամբ։

Սրտագին բարեմաղթություններով ջերմ խոսքեր ասացին Վեհափառ Հայրապետին պրոֆ. Կ. Ղաֆադարյանը, ճարտարապետ Ռ. Իսրայելյանը և ճարտարապետ Մ. Մազմանյանը։ Ապա խոսք առավ Դերենիկ սրբազանը և ծանրացավ Ճեմարանի առաջ դրված ազգային-եկեղեցական դաստիարակության հարցերի վրա՝ ճշմարիտ հայ մարդու և հոգևորականի պատրաստության գործում։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 13-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, «ՏՕՆ ԱՆՈՒԱՆԱԿՈՉՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ»։ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագիչն էր հոգեշնորհ Տ. Խորեն վարդապետ Էլչուջյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 14-ԻՆ, «ՏՕՆ ԾՆՆԴԵԱՆ ՍՐԲՈՅՆ ՅՈՎՀԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ»։ Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց արժանապատիվ Տ. Մկրտիչ քահանան։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 20-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում սուրբ պատարագ մատուցեց հոգեշնորհ Տ. Եղիշե վարդապետը։

Սուրբ պատարագի ընթացքում կարդացվեց Վեհափառ Հայրապետի հունվար 14 թվակիր սրբատառ կոնդակը, ուղղված հայ հոգևորականության։ Ապա պատարագիչը քարոզեց «Դուք էք աղ երկրի» բնաբանով։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 22-ԻՆ, ԵՐԵՔՇԱԲԹԻ, պաշտոնական գործերով Մայր Աթոռ ժամանեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Տաճարում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ։ Պատարագեց Շիրակի թեմի առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ. Կոմիտաս վարդապետ Տեր-Ստեփանյանը։

Սուրբ պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

ՀՈՒՆՎԱՐԻ 28-ԻՆ, ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, թեմական գործերով Թբիլիսիից Մայր Աթոռ ժամանեց Վրաստանի թեմի առաջնորդի օգնական հոգեշնորհ Տ. Վահան վարդապետ Գալամդարյանը։

ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՈՒՆՎԱՐԻ 23-ԻՆ, ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, Մայր Աթոռ այցելեցին Չեխոսլովակիայի կինեմատոգրաֆիայի մի խումբ աշխատողներ։ Նրանք եղան Մայր Տաճարին կից եկեղեցահնագիտական թանգարանում, ծանոթացան Տաճարի ճարտարապետական առանձնահատկություններին։ Հյուրերը գոհ տպավորություններով մեկնեցին Երևան։

ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ, ԿԻՐԱԿԻ, Մայր Աթոռ այցի եկան ռումինական Կլուժի օպերայի և բալետի թատրոնի մենեջերուհի Եկատերինա Վիլկովիչը և Վրացական ՍՍՌ ժողովրդական արտիստ Նիկոլայ Բելակնելին։ Արվեստագետները այցելեցին թանգարանը, ընդունվեցին Վեհափառ Հայրապետի կողմից, ապա մեկնեցին լավ տպավորություններով։